

<p>Հանարդ Թիվ 35 Տիպը Պաշտոնական տեղեկատվություն Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.01.31/7(531) Ընդունող մարմինը Արդարադատության նախարարություն Ստորագրող մարմինը Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.02.2007</p>	<p>Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 15.01.2007 Ստորագրման ամսաթիվը 15.01.2007 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը</p>
--	--

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ (ՀՕ-247-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

**Հ Հ Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Յ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
 Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Դ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Թիվ 35 15 հունվարի 2007 թվականի
2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՕ-247-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը **հայտնում է, որ՝**

«Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» 2006 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 69 (524) համարում հրապարակված 2006 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՕ-247-Ն) օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ հունվարի 8-ից, թեև օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է նշված 2007 թվականի հունվարի 1-ը, քանի որ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող նորմեր է պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ՝

Կ. Խտրյան